


ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆ ՅԱՆ



ՅԵՐԳԵՐ

891.99v  
Բ-95

V

891 998

10-95

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

2011-05

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

և

10.23

# Յ Ե Ր Գ Ե Ր

Կ

(ԹԱՐԳՄ. ՅԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

124 2212

Շապիհ Գևորգ  
ԱՆ. ԳՍՍՊԱՐՅԱՆԻ

Պ Ե Տ Տ Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1938

23 APR 2013

8924

891.54-1

БИБЛИОТЕКА  
Академии Наук  
УРСР

В052450



8222-53

## Շ Ո Ւ Ն Ը

Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,  
Ահա այսպես  
Հաչում եմ յես.  
Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,  
Ու տունն այսպես  
Պահում եմ յես:  
Թե դա մեզ մոտ  
Մի հին ծանոթ,  
Մտն եմ վազում,  
Պոչքս շարժում:  
Բայց թե մի գող,  
Զար կամեցող,  
Ուզի թաքուն  
Մտնի մեր տուն,—  
Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,  
Ահա այսպես  
Հաչում եմ յես.  
Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,  
Ու տունն այսպես  
Պահում եմ յես:

Փ Ի Ս Ի Կ Ի Գ Ա Ն Գ Ա Տ Ը

Փիսիկը նըստել  
Մի մութ անկյունում,  
Ունքերը կիտել  
Ու լաց ե լինում:  
Մոտիկ ե գալիս  
Մի ուրիշ կատու.  
— Ինչո՞ւ յես լալիս,  
Այ փիսիկ ջան, դու...  
— Հապա ի՞նչ անեմ,  
Վոր լաց չը լինեմ,—  
Են Համոն թաքուն  
Մածունը կերավ,  
Գընաց առաի մոտ  
Ինձ վըրա դըրավ:  
Հիմի առաիկի  
Յետևից ընկած,  
Ինձ են ման գալի  
Մի-մի փետ առած  
Են քոթոթ Սուրենն,  
Անոն ու Մոսոն:  
Ո՞ւր ե, ասում են,  
Ո՞ւր ե գող փխոն,  
Ա՛խ, թե մի գըտանք,  
Մածուն ցույց կը տանք...»

Եսպես բան սարքեց  
Են Համոն իմ գեմ.  
Ի՞նչ անեմ հապա,  
Վոր լաց չը լինեմ...  
Ու Փիսոն նըստել  
Մի մութ անկյունում,  
Ունքերը կիտել  
Ու լաց ե լինում:

Ծ Ի Տ Ի Կ Ի Ո Ր Ո Ր Ք Ը

Կախված ե ճյուղքից ճոճը ծխտիկի.

Փըչի, հովիկ, փըչի,

Ճոճն ուրորվի, տանի բերի.

Նանի, ծխտիկ, նանի:

Ծխտիկը անուշ յերազ ե տեսնում:

Փըչի, հովիկ, փըչի,

Ճոճն ուրորվի, տանի բերի.

Նանի, ծխտիկ, նանի:

Բայց տես, ծխտիկը քընից չըզարթնի.

Կամաց փըչի, կամաց,

Ճոճն ել զգուշ տանի, բերի.

Նանի, ծխտիկ, նանի:

Յ Ո Չ Ո Ւ Ն Ի Մ Տ Ա Ծ Մ Ո Ւ Ն Ք Ը

Յես ապրում եյի մի փոքրիկ տան մեջ

Առատ ու անփույթ,

Աշխարհքն ինձ համար կըլոր եր անվերջ,

Կեդևը կապույտ:

Նըրանից հետո աչքըս բաց արի

Մի փոքրիկ բընում,

Տեսա՝ աշխարհքը հարդից ե շինած,

Ու մայրս ե շինում:

Մի որ ել, բընից գըլուխս հանած,

Նայում եմ դեռ-դեռ,

Տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած՝

Մեր բունը վըրեն:

Հիմի թըռչում եմ հեռու, շատ հեռու,

Ամեն տեղ գընում,

Բայց թե աշխարհքը ինչից ե շինած —

Ել չեմ հասկանում:

# ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ

Ենտեղ, ուր հովը խաղում է ազատ  
 Ու ջուրն աղմբկում, անվերջ փրփրելում,  
 Ենտեղ իր բարի, իր սիրող մոր հետ  
 Մի շատ անհանգիստ տղա յեր աղբում  
 Մի գորշ խրճիթում,  
 Մի հին խրճիթում,  
 Գետի յեզերքին,  
 Ծառերի տակին:

Մի որ ել յեկավ անհանգիստ տղան,  
 Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.  
 «Մայրիկ, ետեղից պետք է հեռանամ.  
 Միակ ձանձրալի տեղը, վոր գիտեմ,  
 Ես գորշ խրճիթն ե,  
 Ես հին խրճիթն ե,  
 Գետի յեզերքին,  
 Ծառերի տակին:

«Թող գընամ, շրջեմ աշխարհից աշխարհ,  
 Ճամփորդեմ լավ-լավ տըներ տեսնելու,  
 Ամենից լավը ընտրեմ մեզ համար,  
 Գամ քեզ ել առնեմ ու փախչենք հեռու  
 Ես գորշ խրճիթից,  
 Ես հին խրճիթից,  
 Գետի յեզերքին,  
 Ծառերի տակին»:

Ու գընաց յերկար թափառեց տղան,  
 Մեծ ու հոյակապ շատ տըներ տեսավ,  
 Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...  
 Ու հառաչելով յետ վերադարձավ  
 Են գորշ խրճիթը,  
 Են հին խրճիթը,  
 Գետի յեզերքին,  
 Ծառերի տակին:

«Գլտա՛ր, գավա՛կս», հարցրեց մայրը,  
 Ուրախ նայելով իր տղի վրա:  
 «Ման յեկա, մայրիկ, աշխարհից աշխարհ,  
 Ամենից սիրուն, լավ տունը, վոր կա,  
 Ես գորշ խրճիթն ե,  
 Ես հին խրճիթն ե,  
 Գետի յեզերքին,  
 Ծառերի տակին»:

# Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Արեւը շատ եր հոգներ, ման եր յեկել ամբողջ որը.

«Հերիք ե, ասաւ,  
Գնամ պառկեմ ու քնեմ»:

Տերեւը ուրախ սըվսըվում եր, վոր կանգ առաւ.

«Ես ի՞նչ ե ասաւ,  
Արեւն ել չի յերեւում,  
Յես ել պառկեմ ու քնեմ»:

Թռչնակը յերգում եր ծառի վրա, հանկարծ լռեց.

«Ես ի՞նչ ե, ասաւ,  
Վո՞չ տերեւ ե սըվսըվում,  
Վո՞չ արեւն ե յերեւում,  
Յես ել գնամ ու քնեմ»:

Նապաստակը վոստոստում եր թփերի տակ, վոր ականջը  
սրեց.

«Ես ի՞նչ ե, ասաւ,  
Վո՞չ թռչնակ ե ծըլվըլում,  
Վո՞չ տերեւ ե սըվսըվում,  
Վո՞չ արեւն ե յերեւում,  
Յես ել գնամ ու քնեմ»:

Վորսկանը անտառում վորս եր վորոնում, կանգնեց.

«Ես ի՞նչ ե ասաւ,  
Վո՞չ նապաստակ ե վազ տալի,  
Վո՞չ թռչնակ ե ծըլվըլում,  
Վո՞չ տերեւն ե սըվսըվում,  
Վո՞չ արեւն ե յերեւում,  
Յես ել գնամ ու քնեմ»:

Լուսինը ծագեց, ցած նայեց տեսաւ.

«Ի՞նչ լաւ ե, ասաւ,  
Վո՞չ վորսորդ ե ման գալի,  
Վո՞չ նապաստակ վազ տալի,  
Վո՞չ թռչնակ ե ծըլվըլում,  
Վո՞չ արեւն ե յերեւում,  
Մենակ յես եմ, վոր անքուն  
Բեֆ եմ անում յերկնքում»:

# ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄԵՆՔԻՆ

Դաշտ ու անտառ գյուղի ճամփան  
Ծածկելի է մի թիզ ձյունով.  
Նլ չի ճարվում ուտելու բան,  
Ո՞վ է տեսել ես տեսակ սով.  
Վոչ մի ցորեն, վոչ մի հատիկ...  
Խնդրում ենք ձեզ, բարի մարդիկ,  
Ասածու սիրուն, մի կըտոր հաց,  
Կոտորվեցինք, մեռանք սոված:  
Շուտով կը գան որեր գարնան,  
Մենք ձեզ համար կերգենք զըվարթ,  
Ու փոխարեն ձեր լավության  
Ձեր պարտեզը, այգին ու արտ  
Կը մաքրենք մենք թըրթուռներից,  
Ճիճուներից ու վորդերից.  
Միայն հիմի մի կտոր հաց,  
Կոտորվեցինք, մեռանք սոված:

Մի խումբ ծառերի կողմից՝

Ծիսիկ ճննդուկյան

# ԿՈՒՅՐԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

Որը ցերեկով  
Յերեք չորս հոգով  
Կույրերը յեկան  
Փըղին դեմ ընկան:  
Մինը, վոր մարմնին դիպավ հաստ, ահեղ.  
— Հեյ, զգուշ, կանչեց, մի պատ կա ետեղ:  
Մյուսը, վոր վոտն եր շոշափել իր դեմ՝  
— Ի՛նչ պատ, ծիծաղեց, ես կոճղ ե կարծեմ:  
Յերրորդի ձեռը կընճիթն եր ընկել.  
— Ոձ ե, ոձ, գոռաց, ել ի՛նչ եք կանգնել:  
Մինչդեռ չորրորդը պոչիցը բըռնած  
Քահ-քահ խնդալով ծաղրում եր նրանց.  
— Վան, ճիշտ վոր կույր եք. չիմացավ վոչվոք:  
Վոչ ես ե, վոչ են, այլ կախած մի թուկ:  
— Ձե—պատ ե, չե—կոճղ, չե—ոձ ե, չե—թուկ...  
Ու աղմըկելով ամեն մինը ջուկ,  
Ինչպես վոր յեկել  
Դեմ եյին ընկել,  
Ենպես ել կույր-կույր յետ դարձան կըրկին—  
Սարի պես փիղը պարզ լուսի տակին:



Խմբագիրը՝ Ն. Թումանյան  
Տեխ. խմբագիրը՝ Ս. Գառապերյան  
Սրբագրել է՝ Հ. Մանուկյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ

|                                   |    |
|-----------------------------------|----|
| 1. Շուկեր . . . . .               | 3  |
| 2. Փխիկի գանգատը . . . . .        | 4  |
| 3. Ծիտիկի որորքը . . . . .        | 6  |
| 4. Թռչունի մտածմունքը . . . . .   | 7  |
| 5. Ամենից լավ տունը . . . . .     | 8  |
| 6. Իրիկուն . . . . .              | 10 |
| 7. Մի բաց նամակ ամենքին . . . . . | 12 |
| 8. Կույրերի կարծիքը . . . . .     | 13 |

Գլավիտի լիազոր՝ Դ.- 3525. Հրատ. № 4443.

Պատվեր 229. Տիրաժ 6000.

Թուղթ 62×94 Տպագր. 1 մամ.

Մեկ մամ. 24480 նշան.

Հանձնված է արտադրության 20 հունվարի 1938 թ.

Մտորագրված է տպագրության 29/III 1938 թ.

Գին՝ 60 Կ.

---

Պետհրատի I տպարան, Յերևան. Լենինի 65

MS

2-50

ՀՀ Ազգային գրադարան



NL0396470

ԳԻՆԵ 60 ԿՈՊ.

8924

052450



ՕՅ. ԴՄԱՆՅԱՆ  
ՄԵՏՈՒ  
ԳԻՅ. ԱՐՄ. ՍՏՐ ԵՐԵՎԱՆ